

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱծ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁԱԿԱՆ ԱՅԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱծ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

13 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Տ. Դանիելյանի (գեկուցող),  
Ֆ. Թոփյանի, Վ. Շովիաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Շ. Նազարյանի, Ռ. Պապյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարքին գործերի նախարարի փեղակալ Գ. Ղարիբջանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

որնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 6-ին Աստանայում սպորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիք է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2007 թվականի փետրվարի 9-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցի գրավոր բացաբրությունները, հեքազոփելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն սպորագրվել է 2006 թվականի նոյեմբերի 6-ին Ասրանայում՝ նպագակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության միջև բարեկամական հարաբերությունների հեքազագործումը եւ կարգավորել այդ պետությունների քաղաքացիների փոխայցելությունների ռեժիմը:

2. Համաձայնագրով Կողմերը պարփակորվում են իրավունք վերապահել միմյանց քաղաքացիներին, այդ թվում՝ նաեւ երրորդ պետություններում մշտապես բնակվողներին կամ ժամանակավորապես գգնվողներին, առանց մուգքի արդունագրի մուգք գործել, բարանցիկ երթեւեկել, դուրս գալ եւ 90 օր ժամկետով գգնվել իրենց պետությունների բարածքում:

3. Համաձայնագրում դրված է միմյանց բարածք մուգք գործելու եւ այնպեղից դուրս գալու համար Կողմերի պետությունների քաղաքացիների վավերական փաստաթղթերի ցանկը: Կողմերը պարփակորվում են փոխանակել այդ փաստաթղթերի նմուշները, իսկ նոր փաստաթղթեր գործողության մեջ դնելու կամ գործող փաստաթղթերում փոփոխությունների, ինչպես նաեւ մուգքի, կեցության եւ ելքի պայմանների փոփոխությունների դեպքում՝ դիվանագիրական ուղիներով միմյանց դեղեկացնել դրանցից 30 օր առաջ:

4. Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է մյուս Կողմի պետության այն քաղաքացիների մուգքը մերժելու կամ կեցության ժամկետը կրճատելու, որոնց ներկայությունն իրենց բարածքներում համարում է անցանկալի, եւ պարփակոր է հեք ընդունել իր այն քաղաքացիներին, որոնց կարգադրվել է լրել մյուս Կողմի պետությունը:

5. Համաձայնագրով Կողմերին իրավունք է վերապահվում ամբողջովին կամ մասամբ դադարեցնել համաձայնագրի առանձին դրույթների գործողությունը, եթե դա անհրաժեշտ է պետության անվտանգության, հասարակական կարգի կամ բնակչության առողջության պաշտպանության շահերից ելնելով:

6. Համաձայնագիրը կնքված է անորոշ ժամկետով: Նախարեսված է համաձայնագրի ուժի մեջ մընելու, գործողությունը դադարեցնելու, դրանում փոփոխություններ

Եւ լրացումներ կապարելու, դրա մեկնաբանման եւ կապարման հետ կապված վիճելի հարցերի կարգավորման կարգը:

7. Երկու պետությունների կողմից միմյանց քաղաքացիների համար առանց մուտքի արդունագրի փոխայցելությունների կարգի սահմանումն ընդլայնում է ՀՀ Սահմանադրության 25 հոդվածում ու Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12 հոդվածում ամրագրված՝ անձի ազատ գեղաշարժվելու իրավունքի իրականացման սահմանները:

8. Համաձայնագրի դրույթները համահունչ են մարդու գեղաշարժի ազարության հանրաճանաչ իրավունքի երաշխավորման միջազգային սկզբունքներին, հաշվի են առնում արդարակարգ իրավիճակներում պարփակություններից շեղման ընդհանուր պահանջները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դարարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դարարանը **Ո Ր Ո Շ Ե Յ.**

1. 2006 թվականի նոյեմբերի 6-ին Ասբանայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին համաձայնագրում ամրագրված պարփակությունները համապարասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

## ՆԱԽԱԳԱՌՈՂ

## Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ